Ճամբարային Տարածքների, Հանգստի Ավտոտնակների Կայանատեղիների և Տնակների Վարձակալման Կետերի Վերաբացման Արձանագրություն. Հավելված O

Վերջին թարմացումները (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

1/28/21: Ճամբարային Տարածքները, Հանգստի Ավտոտնակների Կայանատեղիները և Տնակների Վարձակալման Կետերը կարող են թույլատրել գիշերակացը՝ համապատասխան արձանագրության և նահանգի ուղեցույցի:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը, գիտական և հանրային առողջապահության փորձաքննության աջակցությամբ, որդեգրում է աստիճանական մոտեցում՝ թույլ տալու որոշ վայրերի և հաստատությունների ապահով վերաբացումը: Ներքոհիշյալ պահանջները մասնավորեցված են ճամբարային տարածքների, հանգստի ավտոտնակների կայանատեղիների և տնակների վարձակալման կետերի համար, որոնց վերաբացումը թույլատրվել է Նահանգի Հանրային Առողջապահության Պատասխանատուի Հրամանով: Նահանգապետի կողմից նշված այս հատուկ վայրերում պարտադրված պայմաններից բացի, այս տեսակի բիզնեսների գործունեությունը պետք է նաև համապատասխանի հետևյալ ցուցակում առկա բոլոր պայմաններին:

Հաջորդող արձանագրություններում <<ընտանիք>> եզրույթը սահմանվում է՝ որպես <<անձինք, որոնք ապրում են միասին՝ որպես մեկ ընտանիք>> և չպետք է ներառի կազմակերպական խմբերի կացության հաստատություններ՝ ինչպիսիք են հանրակացարանները, եղբայրական համայնքները, կանանց համայնքները, մենաստանները, կուսանոցները կամ բնակելի խնամքի հաստատությունները, ինչպես նաև չպետք է ներառի այնպիսի առևտրային կացության հաստատություններ՝ ինչպիսիք են օթևանները, հյուրանոցները և մոթելները:[1] <<Անձնակազմ>> և <<աշխատակից>> եզրույթները ներառում են աշխատակիցներին, կամավորներին, ստաժորներին և փորձնակներին (ստաժորներ), սովորողներին և մյուս անհատներին, որոնք աշխատանք են կատարում հաստատության տարածքում: <<Այցելուները>> կամ <<հաճախորդները>> պետք է ընկալվեն որպես հանրության անդամներ, կամ այլոք, որոնք անձնակազմի անդամներ կամ աշխատակիցներ չեն, որոնք ժամանակ են անցկացնում բիզնեսի կամ հաստատության տարածքում: <<Շենք>>, <<հաստատություն>> և <<շինություն>> եզրույթները վերաբերում են շինությանը, Կայանատեղիներով Հանգստի Փոխադրամիջոցներին (RV), տնակներին, վարձակալված վայրերին, տարածքներին և ցանկացած հարակից շենքերին կամ շինություններին, որոնց տարածքում իրականացվում է թույլատրված գործունեություն:

Խնդրում ենք նկատի ունենալ. Սույն փաստաթուղթը կարող է վերանայվել, քանի որ Լոս Անջելեսի Շրջանի վեբկայքում՝ http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/, պարբերաբար տեղադրվում են հավելյալ տեղեկություններ և աղբյուրներ սույն փաստաթղթի և կից ուղեցույցների թարմացման համար:

Ցուցակն ընդգրկում է՝

(1) Աշխատատեղի քաղաքականություն ու գործելակերպ՝ աշխատողների առողջությունը ապահովելու համար

(2) Ֆիզիկական հեռավորությունն ապահովելու միջոցառումներ

(3) Վարակի վերահսկումը ապահովելու միջոցառումներ

(4) Հաղորդակցություն աշխատակիցների և հասարակության հետ

(5) Կարևորագույն ծառայություններին անաչառ հասանելիությունն ապահովելու միջոցառումներ

Այս հինգ հիմնական ոլորտները պետք է հաշվի առնվեն ձեր հաստատության կողմից վերաբացման ցանկացած արձանագրության մշակման ժամանակ:

Կասեցված է այլևս կիրառելի չէ

[1] Los Angeles County Code, Title 22. §22.14.060 - F. Family definition. (Ord. 2019-0004 § 1, 2019.)
https://library.municode.com/ca/los_angeles_county/codes/code_of_ordinances?nodeId=TIT22PLZO_DIV2DE_CH22.14DE_22.14.060F

Սույն ուղեցույցում ընդգրկված բոլոր ճամբարային տարածքները/ հանգստի ավտոտնակների կայանատեղիները և տնակների վարձակալման կետերը պետք է իրականացնեն ներքոհիշյալ բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ:

Հաստատության անվանումը. _____

Հաստատության հասցեն. _____

Ա. ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ՝ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ԿԵՏԵՐԸ)

- ❑ Տնից աշխատելու հնարավորություն ունեցող բոլոր աշխատակիցներին հրահանգվել է աշխատել տնից:
- ❑ Խոցելի խմբում գտնվող աշխատակիցներին (65 և ավելի բարձր տարիքի, քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող անձինք) հնարավորության սահմաններում հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը հնարավոր կլինի կատարել տնից:
- ❑ Աշխատանքային գործընթացները վերանայվում են՝ հնարավորության շրջանակներում մեծացնելու աշխատակիցների՝ տնից աշխատելու հնարավորությունը: Աշխատեք աշխատակիցներին տալ վերափոխված դիրքաջադրանքներ, որոնք նվազագույնի կհասցնեն այցելուների և այլ աշխատակիցների հետ նրանց շփումը:
- ❑ Հաստատվել են այլընտրանքային, նիստանողական կամ հերթափոխային աշխատանքային ժամանակացույցեր՝ ֆիզիկական հեռավորությունը առավելագույնի հասցնելու նպատակով:
- ❑ Բոլոր աշխատակիցներին (ներառյալ՝ վճարովի աշխատողները և կամավորները, ընդհանուր՝ «աշխատակիցները») հանձնարարվել է չգալ աշխատանքի, եթե հիվանդ են կամ շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ: Անհրաժեշտության դեպքում՝ աշխատակիցներն ըմբռնումով հետևում են Հանրային Առողջապահության Վարչության՝ ինքնամեկուսացման և կարանտինի ցուցումներին: Աշխատավայրում արձակուրդային քաղաքականությունները վերանայվել են և ենթարկվել փոփոխությունների՝ ապահովելու հիվանդության պատճառով աշխատանքի չներկայացած անձանց ազատումը պատասխանատվությունից:
    - Տե՛ս հավելյալ տեղեկատվություն, հիվանդության պատճառով արձակուրդների և COVID-19-ի դեպքում աշխատակիցների անաշխատունակության փոխհատուցման Կառավարության աջակցող ծրագրերի մասին, ներառյալ՝ աշխատակիցների հիվանդության պատճառով արձակուրդի իրավունքների վերաբերյալ Ընտանիքների Համար Կորոնավիրուսի Առաջին Արձագանքման Ակտը և Մարտի 19-ից Հուլիսի 5-ն ընկած ժամանակահատվածում COVID-19-ի վարակի դեպքում կանխավարկածները աշխատողների անաշխատունակության փոխհատուցման նպաստների իրավունքների մասին՝ Նահանգապետի N-62-20 Գործադիր Հրամանը:
- ❑ Ստանալով տեղեկատվություն մեկ կամ ավելի աշխատակիցների՝ COVID-19-ի թեստի դրական արդյունքի կամ COVID-19-ին նման ախտանշանների ի հայտ գալու մասին՝ գործատուն ունի գործող պլան կամ արձանագրություն՝ հիվանդ անձի (անձանց) տնային մեկուսացման և նրանց հետ շփում ունեցած բոլոր աշխատակիցների անմիջապես ինքնակարանտինի ենթարկվելու պահանջի վերաբերյալ: Գործատուի պլանում պետք է ընդգրկվի արձանագրություն՝ կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար COVID-19 թեստի հասանելիության նպատակով՝ պարզելու համար, թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որոնք կարող

Կաղապար է այլևս կիրառելի չէ

են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝ Հանրային Առողջապահության ցուցումները աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ:

- Իրականացվում են մուտքի ստուգումներ՝ նախքան աշխատակիցների կողմից աշխատավայր մտնելը՝ համաձայն Հանրային Առողջապահության Վարչության Մուտքի Ստուգումների ուղեցույցի: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անհատը գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- Հաստատությունում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի դեպքերի բացահայտման դեպքում գործատուն պետք է զեկուցի դեպքերի մասին Հանրային Առողջապահության Վարչությանը՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով կամ առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.redcap.link/covidreport: Եթե աշխատավայրում վարակված իրավիճակ է հայտնաբերվում, Հանրային Առողջապահության Վարչությունը խմբի նկատմամբ արձագանք կնախաձեռնի, որը ներառում է՝ վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար անհրաժեշտ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի խմբի հետազոտման գործակալ՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- Աշխատակիցներին, որոնք շփում ունեն այլ անձանց հետ, պետք է անվճար տրամադրվի դեմքի ծածկոց, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակն ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու ժամանակ կամ հավանական շփման դեպքում: Աշխատակիցները, որոնց իրենց բժիշկը հանձնարարել է չկրել դեմքի ծածկոցներ, պետք է կրեն ներքևի եզրին ամրացված դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջներին, եթե նրանց առողջական վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակը ծածկող ամրացով դեմքի վահանները: Միակողմանի փականներ ունեցող դիմակներ չպետք է օգտագործվեն: Բոլոր աշխատակիցները պետք է մշտապես կրեն դեմքի ծածկոցներ՝ բացառությամբ, երբ մենակ են փակ դռներով անձնական սենյակներում կամ ուտելիս կամ խմելիս: Նախկինում կիրառվող բացառությունն այն աշխատակիցների համար, որոնք աշխատում էին ամբողջ միջնապատերով առանձնացված աշխատախցերում, որոնց միջնապատերի բարձրությունը գերազանցում էր աշխատակցի հասակը կանգնած ժամանակ, այլևս չի գործում՝ մինչև հետագա ծանուցումը:
- Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին չի խրախուսվում ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերը, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հեռանալ իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը մյուսներից ավելի շատ հեռավորություն և միջնապատեր է ապահովում:
- Զբաղվածությունը կրճատվել է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվել ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշերի և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
    - Նշել առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը.
    - Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
    - Սեղանները դնել վեց ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կպցնել՝

Ստեղծված է պատասխանատուի կողմից

զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակների վրա գծանշումներ դնել՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:

- ❑ Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխարինել կտորե դիմակները:
- ❑ Աշխատակիցներին նաև տրամադրվում են ձեռնոցներ՝ հաճախակի դիպչող մակերեսների հետ գործ ունենալիս կամ ախտանշանների ստուգման ժամանակ օգտագործման համար:
- ❑ Աշխատակիցներին հրահանգվել է ապահովել այցելուներից և միմյանցից առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն Ճամբարանային ամբողջ Տարածքներում: Աշխատակիցները կարող են միայն ակնթարթորեն մոտենալ հաճախորդներին օգնություն ցուցաբերելու կամ անհրաժեշտ այլ նպատակով:
- ❑ Սանհանգույցները և այլ ընդհանուր օգտագործման տարածքները պարբերաբար ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով՝
  - Սանհանգույցներ ________________________________
  - Այլ՝ ________________________________
- ❑ Ախտահանիչները և այլ պարագաները հասանելի են աշխատակիցների համար հետևյալ վայր(եր)ում.

  ____

- ❑ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչը հասանելի է աշխատակիցների համար հետևյալ վայր(եր)ում.

  ____

- ❑ Աշխատակիցներին հաճախակի հիշեցվում է ձեռքերը լվանալու մասին:
- ❑ Սույն արձանագրության պատճեն բաժանվել է բոլոր աշխատակիցներին:
- ❑ Հնարավորության սահմաններում յուրաքանչյուր աշխատակցի հրահանգվել է բերել իրենց սեփական օգտագործման պարագաները՝ հեռախոսների, պլանշետների, երկկողմանի ռադիոկապի միջոցների, այլ աշխատանքային պարագաների կամ գրասենյակային պիտույքի համատեղ օգտագործումից խուսափելու համար: Նրանց նաև հրահանգվել է երբեք համատեղ չօգտագործել անձնական պաշտպանիչ պարագաները:
- ❑ Այն դեպքում, երբ իրերն անհրաժեշտ են կիրառել համատեղ, դրանք ախտահանվում են համպատասխան նյութերով՝ կիրառության հերթափոխների միջև, ներառելով հետևյալը՝ համատեղ օգտագործման գրասենյակային պիտույքներ, ինչպիսիք են լուսապատճենման սարքերը, ֆաքսը, տպիչները, հեռախոսները, ստեղնաշարերը, դակիչները, նամակների բացման պարագաները, ընդունարանի շփման մակերեսները, համատեղ կիրառության աշխատանքային պիտույքը, աուդիո և վիդեո սարքերը, ռադիոները, և այլ:
- ❑ Աշխատակիցներին տրամադրվում է ժամանակ՝ հերթափոխների ընթացքում մաքրման աշխատանքներ իրականացնելու համար: Մաքրման աշխատանքները հանձնարարվում են աշխատանքային ժամերի ընթացքում՝ որպես աշխատակիցների աշխատանքային պարտականությունների մի մաս: Անհրաժեշտության դեպքում փոփոխեք ժամերը՝ կանոնավոր կերպով և խնամքով մաքրում ապահովելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում պետք է կապ հաստատվի մաքրման գործունեությամբ զբաղվող երրորդ կողմի հետ՝ մաքրման գործողությունները պատշաճ իրականացնելու համար:
- ❑ Հսկեք աշխատակիցների բացակայությունը և ունեցեք համապատասխան որակավորում ունեցող փոխարինող անձնակազմի ցուցակ:
- ❑ Աշխատեք գրասենյակներում կամ այլ աշխատատեղերում տեղադրել բարձրորակ օդային մաքրող սարքեր, արդիականացնել շենքի օդային ֆիլտրերը հնարավորինս բարձր արդյունավետությամբ աշխատելու նպատակով և կատարել այլ փոփոխություններ՝ գրասենյակների և այլ վայրերում օդի

Կասեցված է՝ այլևս վավեր չէ

և օդափոխության որակը բարձրացնելու համար:

- ❑ Կարգավորեք անձնակազմի հանդիպումները՝ ֆիզիկական հեռավորությունն ապահովելու նպատակով և անցկացրեք ավելի քիչ քանակությամբ անհատական հանդիպումներ՝ ֆիզիկական հեռավորության պահանջները պահպանելու համար:
- ❑ Հնարավորության դեպքում աշխատողների հետ հանդիպումներն անցկացրեք հեռախոսով, վեբինարի միջոցով կամ դրսում: Հնարավորության դեպքում հաշվի առեք վիրտուալ հարցազրույցների հավանականությունը նոր աշխատակիցների հարցազրույցների դեպքում:
- ❑ Այս ցուցակում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի աշխատանքային պայմաններին վերաբերող քաղաքականությունից, տարածվում են նաև առաքման անձնակազմի և ցանկացած այլ կազմակերպության վրա, որոնք կարող են տարածքում գտնվել որպես երրորդ կողմ:
- ❑ Ընտրովի—Նկարագրեք այլ միջոցներ:

____

Բ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Ապահովեք այցելուների և այլ աշխատակիցների միջև առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանման միջոցառումներ: Դրանք կարող են ներառել Plexiglas պատնեշների տեղադրումը այցելուների և աշխատակիցների միջև խանութներում, ընդունարաններում, կամ այցելուների սպասարկման կենտրոններում՝ կիրառելով տեսանելի ցուցանակներ հերթերում հեռավորության պահպանման համար: Այցելուները պետք է նաև ուղղորդվեն, թե որտեղ կանգնել՝ կիրառելով տեսողական կամ ձայնային ցուցումներ ջրալցակայաններում, աղբանոցներում, գազալցակայաններում և այլ նմանատիպ ծառայությունների վայրերում սպասելիս:
- ❑ Աշխատակիցներին հիշեցվում է խուսափել ձեռքսեղմումներից, բռունցքներով կամ արմունկներով հարվածելուց և այլ ֆիզիկական շփման ձևերից:
- ❑ Տեսուչները պետք է հսկեն տարածքները, որտեղ հավանական է մարդկանց խմբավորումը՝ ապահովելու համար ֆիզիկական հեռավորությունը և այլ ցուցումները: Այս տարածքները կարող են ներառել լողանալու տարածքները, սպորտային դաշտերը, անվաչմուշկների այգիները, կածանները, հանրային վայրերը, զբոսախնջույքների վայրերը: Տեղադրեք ֆիզիկական հեռավորության պահպանման ցուցանակներ:
- ❑ Հետևյալ տարածքները մնում են փակ՝ բասկետբոլի, թենիսի և վոլեյբոլի դաշտերը, մագլցման կառույցները և խաղահրապարակները:
- ❑ Այն հաստատությունների համար, որոնք իրականացնում են վճարովի վերահսկվող բացօթյա գործունեություն, հաշվի առեք ամրագրման համակարգերի կիրառությունը՝ այցելուների քանակը սահմանափակելու նպատակով:
- ❑ Հաշվի առեք հեռավար գրանցման հնարավորությունները ճամբարային տարածքների և հանգստի ավտոմեքենաների կայանատեղիների նոր այցելությունների դեպքում: Տեղադրեք ցուցանակներ այգու մուտքի մոտ՝ տեղեկացնելու այցելուներին նրանցից ակնկալվող գործողությունների մասին: Տեղադրեք հեռախոսահամար, օրինակ, այցելուների հետ կապնվելու համար՝ նրանց կողմից գրանցման տարածք մուտքից խուսափելու համար: Հնարավորության դեպքում խրախուսեք առցանց վճարումների, տեղում վճարման կայանների, վարկային քարտերով կամ հեռախոսով վճարման օգտագործումը:
- ❑ Եթե հեռավար գրանցումները հնարավոր չեն, գրանցեք այցելուներին դրսում և ստացականները ուղարկեք էլեկտրոնային փոստի միջոցով: Անհրաժեշտության դեպքում ուղեկցեք կամ ուղղորդեք այցելուներին անմիջապես իրենց այցելության վայր՝ հասնելուն պես հետևելով ֆիզիկական հեռավորության պահանջներին: Միայն մեկ ընտանիք պետք է զբաղեցնի յուրաքանչյուր ճամբարային կամ վարձակալման տեղանքը, իսկ չգրանցված այցելուների մուտքը ճամբարային

Չեղարկված է՝ այլևս ուժի մեջ չէ

տարածք կամ հանգստի ավտոտնակների կայանատեղ պետք է արգելվի:

- ❑ Հաշվի առեք այցելուների կողմից անհրաժեշտ պարագաների՝ հանրախանութից նախապես գնելու անհրաժեշտությունը՝ ներառյալ վառելափայտ, սնունդ, կամ այլ ապրանքներ և ունեցեք աշխատակիցներ, որոնք կապահովեն պարագաների առաքումը ճամբարային տարածք կամ կայանատեղի:
- ❑ Հավաքատեղիների և խմբակային գործունեության բացօթյա տարածքները, ներառյալ տաղավարները, խարույկների տարածքները, հանրային կիրառության խոհանոցները և ամֆիթատրոնները պետք է փակ մնան: Հեռացրեք, առանձնացրեք, տեղադրեք փակման ցուցանակներ կամ ժապավեններով փակեք բոլոր նստարանները, ընդհանուր զբոսախնջույքի սեղանները, բազմամարդ նստելավայրերը (ներառյալ՝ խարույկների շուրջ նստատեղերը) այցելուների կողմից խմբավորումներից խուսափելու համար:
- ❑ Բոլոր հանրային միջոցառումները և/կամ խմբակային հավաքները, ներառյալ խմբային զբոսախնջույքները, խմբային ճամբարները, բացօթյա ամֆիթատրոնների ցուցադրությունները, երաժշտական կամ այլ միջոցառումները պետք է արգելվեն կամ հետաձգվեն:
- ❑ Ավելի փոքր զբոսախնջույքների վայրերը, որոնք հիմնականում նախատեսված են ընտանիքներով հավաքների համար, կարող են բացվել՝ ֆիզիկական հեռավորության ապահովման ցուցումների մասին նշանների տեղադրման պայմանով (օրինակ՝ սահմանափակում մինչև միայն մեկ ընտանիքի համար):
- ❑ Ստուգեք ճամբարային տարածքները կամ հանգստի ավտոտնակների կայանատեղիները՝ որոշելու համար, թե արդյոք տարածքը պետք է ավելի քիչ քանակությամբ այցելուներ սպասարկի՝ ֆիզիկական հեռավորությունն ապահովելու համար:

ԲԱՑՕԹՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Տեսուչները պետք է ձեռնարկեն քայլեր՝ հավաստիանալու, որ բարձր վտանգ ներկայացնող գործողությունները, այդ թվում՝ անձինք, որոնք դեռևս ներառված չեն նահանգային ուղեցույցներում, չեն անցկացվում իրենց տարածքներում:
- ❑ Ստուգեք հանգստի պարագաների վարձակալման գործընթացները և որոշեք, թե արդյոք կա բավարար աշխատակազմի կարողություն և առկա մաքրման և ախտահանման միջոցներ՝ նման գործողությունները վերսկսելու համար: Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս շրջանային ցուցումների [բացօթյա պարագաների վարձույթ](#) բաժինը:
- ❑ Անհրաժեշտության դեպքում ձևափոխել բացօթյա հանգստի միջոցառումները՝ պատշաճ մաքրման և ախտահանման ընթացակարգերը հնարավոր դարձնելու համար:
- ❑ Հետևեք շրջանային կայքէջում առկա ցուցումներին՝ բացօթյա տարբեր միջոցառումների, ինչպիսիք են ձկնորսությունը, թենիսը, արահետավազքը և այլն, համոզվելու համար, որ հետևում եք վարակի պատշաճ վերահսկման և ֆիզիկական հեռավորության արձանագրություններին http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/**:**
- ❑ «Փափուկ իրերի» (փրկարարական բաճկոններ, սուզակների արտահագուստ, պարաններ, թամբի պայուսակներ կամ ուսապարկեր) ախտահանումը հավելյալ բարդություն է ներկայացնում: Նման համար ապրանքներն անհրաժեշտ է մանրակրկիտ և արդյունավետ մաքրել՝ թույլատրելով կիրառության միջև բավականաչափ ժամանակահատվածի պահպանումը՝ առնվազն 3 օր՝ նվազագույնի հասցնելու COVID-19-ի փոխանցման վտանգը:
- ❑ Սերտ շփման ծրագրերը և սպորտը, որոնք պահանջում են վեց ոտնաչափից քիչ հեռավորության անհրաժեշտություն տարբեր ընտանիքների ներկայացուցիչների միջև, պետք է արգելվեն: Սրանք ներառում են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են խմբակային մարզական միջոցառումները, բասկետբոլը, միջմարզական միջոցառումները, մրցավազքերը կամ պարերը:
- ❑ Սահմանափակեք սերտ շփում պահանջող բացօթյա հանգստի միջոցառումները մինչև մեկ ընտանիքի համար: Սրանք ներառում են նավակի վարձույթները, պարանի կամ պատի մագլցման

գործողությունները: Ճամբարային տարածքներում և հանգստի ավտոտնակների կայանատեղիներում աշխատեք ապահովել մեկ ընտանիքի անդամների մասնակցությամբ զբոսանքների, կինոդիտումների, մինի գոլֆի, որսի և այլ գործողությունների անցկացումը ֆիզիկական հեռավորության պահպանման պայմաններում:

- ❑ Սաղավարտներով, հանդերձանքով, պաշտպանիչ հագուստով կամ այլ պարագաներով մարդկանց ապահովելու ժամանակ աշխատակազմը պետք է պահպանի ֆիզիկական հեռավորությունը: Հնարավորության դեպքում անձնակազմը պետք է ցույց տա, թե ինչպես պատշաճ կերպով տեղադրել և հանել սարքավորումները, այլ ոչ թե խախտի ֆիզիկական հեռավորությունը՝ աջակցություն ցուցաբերելու համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԼՈԳԱՍԵՆՅԱԿՆԵՐ

- ❑ Հանրային սանհանգույցները պետք է մաքրվեն և ախտահանվեն օրվա ամբողջ ընթացքում: Ճամբարային տարածքի, հանգստի ավտոտնակների և հանգստի գոտիների առավելագույն ծանրաբեռնվածությունը պետք է հիմնված լինի գործող սանհանգույցների թվի վրա, որոնք կարելի է օգտագործել ֆիզիկական հեռավորության պահանջների ապահովման պայմաններում:
- ❑ Համատեղ օգտագործման սանհանգուցային սենյակները պետք է մաքրվեն ամեն ժամ ՝ օգտագործելով Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչ նյութերով: Հաճախակի շփման մակերեսները, ինչպիսիք են ծորակները, զուգարանակոնքերը, դռան բռնակները և լույսի անջատիչները պետք է հաճախակի մաքրվեն և ախտահանվեն: Աշխատակիցները պետք է վերապատրաստվեն նոր նյութերի պատշաճ կիրառության և դրանց վտանգավորության համար՝ ըստ Կալիֆորնիայի Զբաղվածության Անվտանգության և Առողջապահության ակտի ցուցումների, և պետք է ապահովվեն հատուկ մաքրող միջոցների կիրառության անհրաժեշտ պաշտպանիչ պարագաներով, ինչպիսիք են աչքերի պաշտպանիչ ակնոցները կամ ձեռնոցները:
- ❑ Կազմեք և փակցրեք մաքրման ժամանակացույց բոլոր բաց սանհանգույցներում: Փակցրեք ժամանակացույցը մուտքի դռան վրա, որպեսզի այցելուները իմանան, թե երբ կարող են կամ չեն կարող օգտվել սանհանգույցներից: Անպայման փակեք սանհանգույցի դուռը մաքրման աշխատանքների ընթացքում:
- ❑ Հաշվի առեք ստուգաթերթիկների կամ մշտադիտարկման համակարգերի կիրառությունը՝ ստուգելու, թե ինչ հաճախականությամբ են իրականացվում մաքրման աշխատանքները:
- ❑ Թույլատրեք լոգարանների օգտագործումը միայն երբ տեղադրված են անհրաժեշտ միջնապատեր կամ անհրաժեշտ ցուցանակներ՝ ֆիզիկական հեռավորության պահպանման ցուցումներով: Եթե միջնապատերի կամ ցուցանակների կիրառությունը հնարավոր չէ, այս տարածքները պետք է մնան փակ:
- ❑ Ապահովեք սանիտարական հարմարությունների գործարկման և անհրաժեշտ պարագաներով ապահովվածության մակարդակը: Անհրաժեշտության դեպքում տրամադրել հավելյալ օճառ, թղթե սրբիչներ և անձեռոցիկներ, ձեռքի ախտահանիչներ: Հնարավորության դեպքում տեղադրեք սենսորային սարքավորումներ՝ ներառյալ շարժողական սենսորային լվացարաններ, ծորակներ, օճառի, ախտահանիչ լուծույթների և թղթե սրբիչների սարքեր:
- ❑ Բազմատեղ սանհանգույցների դռները պետք է հնարավոր լինի բացել և փակել՝ առանց բռնակներին դիպչելու: Եթե դռները հնարավոր չի բացել առանց բռնակներին դիպչելու, ապա դուռը պահեք բաց վիճակում և կամ դռան մոտ տեղադրեք աղբաման, որպեսզի հնարավոր լինի դրանց մեջ նետել թղթե անձեռոցիկները դուռը բացելու ժամանակ: Աղբամանների տեղադրությունը չպետք է խանգարի տարհանման կամ արտակարգ իրավիճակներում ելքի կամ այլ ցուցումներին որոնք սահմանված են Հաշմանդամություն ունեցող Ամերիկացիների մասին Հրամանագրում: Ապահովեք աղբամանների կանոնավոր դատարկումը:
- ❑ Ճամբարային տարածքների, հանգստի ավտոտնակների կայանատեղիների և բացօթյա հանգստի գոտիների այցելուներին պետք է տեղեկացվի, որ լվացարանները կարող են հանդիսանալ վարակի

Արխիվացված է՝ այլևս ակտիվ չէ

տարածման աղբյուր և պետք է խուսափել դրանցում անմիջականորեն ատամի խոզանակ կամ այլ պարագաներ դնելուց: Անձնական իրերի համար կարող են օգտագործել տոպրակներ, սահմանափակելու համար դրանց շփումը սանհանգույցի մակերեսների հետ:

- ❑ Ճամբարային տարածքների և հանգստի ավտոտնակների կայանատեղիների այգիների ղեկավարությունը պետք է խրախուսի հյուրերի կեցությունը սանհանգույց և լոգանքի հարմարություն ունեցող փոխադրամիջոցներում՝ հնարավորության դեպքում սեփական հարմարություններից օգտվելու և հանրային հարմարանքներից խուսափելու նպատակով:
- ❑ Տրամադրեք տեղեկատվություն ծեռքերի պատշաճ լվացման վերաբերյալ՝ ներառյալ սանհանգույցներում կախված ցուցանակները:

ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ❑ Ներկայումս թույլատրվում է բացել միայն բացօթյա լողավազանները, այն բացառությամբ, որ դրանք կարող են օգտագործվել միայն կարգավորվող շարքով լողալու համար (մեկ լողորդ մեկ շարքում):
- ❑ Սաունաները, շոգեբաղնիքները և տաք ավազանները պետք է մնան փակ:
- ❑ Պահպանեք ախտահանիչների ճիշտ մակարդակը (1-10 ppm ազատ քլորին կամ 3-8 ppm բրոմին) և pH (7.2-8):
- ❑ Խորհրդակցեք ընկերության կամ ճարտարագետի հետ, որը նախագծել է ջրային հարմարությունը՝ որոշելու, թե Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված որ ախտահանիչ միջոցներն են լավագույնը ջրային միջավայրում: Ապահովեք ախտահանիչ միջոցների անվտանգ և ճիշտ օգտագործումը և պահպանումը, ներառյալ երեխաներից հեռու պահելը:
- ❑ Ստեղծեք համակարգ, որպեսզի կահույքն ու սարքավորումները (օրինակ ՝հանգստավետ բազկաթոռները), որոնք մաքրելու և ախտահանելու կարիք ունեն, առանձին պահվեն արդեն իսկ մաքրված և ախտահանված կահույքից: Պիտակավորեք պահեստավորման բոլոր արկղները, օգտագործված սարքավորումների համար, որոնք դեռ չեն մաքրվել և ախտահանվել, առանձնացնելով արդեն ախտահանված սարքավորումներից:
- ❑ Խրախուսեք այցելուներին՝ իրենց հետ բերել և օգտագործել անձնական սրբիչներ: Եթե սրբիչներ տրամադրվում են, ապա լվացեք դրանք և հագուստեղենը՝ համապատասխան արտադրողի ցուցումների: Ջրի համար ընտրեք առավելագույն բարձր ջերմությունը և ամբողջովին չորացրեք լվացած իրերը: Սրբիչները փոխեք մեկանգամյա օգտագործման ձեռնոցներով և մի թափահարեք դրանք:
- ❑ Մի խրախուսեք մարդկանց կողմից պարագաների համատեղ օգտագործումը, հատկապես այն պարագաների, որոնք դժվար են մաքրվում կամ ախտահանվում կամ նախատեսված են դեմքի հետ շփման համար (օրինակ՝ ակնոցներ, քթի սեղմակներ, լողադիմակներ):
- ❑ Համոզվեք, որ հաստատությունն ունի բավարար սարքավորումներ այցելուների համար, ինչպիսիք են լողախութակները, լողախողովակները և այլ փչովի հարմարանքները՝ հնարավորության դեպքում նվազեցնելու համար դրանց համատեղ օգտագործումը: Սահմանափակեք սարքավորման օգտագործումը մեկ անձով, և մաքրեք ու ախտահանեք իրերը յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- ❑ Փոխեք տախտակամածի դիրքը և լողավազանի շրջակա տարածքները այնպես, որ կանգնելու և նստելու տեղերը համապատասխանեն ֆիզիկական հեռավորության ապահովման պահանջներին: Դա կարող է ներառել հանգստավետ բազկաթոռների հեռացումը կամ ժապավենով դրանց փակումը՝ օգտագործումն արգելելու նպատակով:
- ❑ Ապահովեք ֆիզիկական ցուցանակներ կամ ուղենիշներ (օրինակ՝ ուղեգծեր ջրում կամ աթոռներ և սեղաններ տախտակամածին) և ցուցանակներ՝ հավաստիանալու համար, որ աշխատակազմը, այցելուները և լողորդներն իրարից գտնվում են առնվազն վեց ոտնաչափ հեռավորության վրա՝ թե՛ ջրում և թե՛ ջրից դուրս:

- ❑ Որտեղ հնարավոր է, տեղադրեք անթափանցելի ֆիզիկական պատնեշներ, ինչպես օրինակ Plexiglas-ը, այն վայրերում, որտեղ այցելուները պետք է առնչվեն միմյանց հետ, և ֆիզիկական հեռավորությունը պահպանելը դժվար է:
- ❑ Հաշվի առեք լողավազաններում վերապահված համակարգի և այլ մեխանիզմների կիրառությունը՝ ֆիզիկական հեռավորության պահպանման նպատակով: Սա կարող է ներառել, օրինակ, մեկ ամբողջական լողուղու վարձույթը մեկ մարդու համար:
- ❑ Ապահովեք, որ փրկարարները պարտավոր չլինեն վերահսկել ձեռքերի լվացման, դիմակների կրման, ֆիզիկական հեռավորության պահպանման գործընթացները: Վերահսկման այս պատասխանատվությունը հանձնարարեք աշխատակազմի մեկ այլ անդամի:
- ❑ Ջրային տարածքներում չպետք է խրախուսվեն խմբային միջոցառումները:

ՏՆԱԿՆԵՐ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ

- ❑ Տնակներ կամ այլ վարձակալական միավորներ ունեցող ճամբարային տարածքները և հանգստի ավտոտնակների կայանատեղիները պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն այդ տարածքները յուրաքանչյուր օգտագործումից հետո մաքրելու և ախտահանելու համար: Դա ներառում է մահճակալների ճաղերի, սեղանների, հեռուստացույցի հեռակառավարման վահանակների, մահճակալների գլխամասերի, վաճառասեղանների, խոհանոցային պարագաների, սառնարանի բռնակների, գազօջախի գլխիկների, հայելիների և այլ առարկաների սրբումն ու մաքրումը:
- ❑ Յուրաքանչյուր այցելուից հետո ամբողջ սպիտակեղենը, պետք է հեռացվի և լվացվի, այդ թվում՝ այն իրերը, որոնք չեն օգտագործվել: Վարձակալման միավորներում անկողնային պարագաները, սրբիչները և լվացված այլ պարագաները մաքրելիս համոզվեք, որ անձնակազմի անդամները կեղտոտ լվացքի հետ գործ ունենալիս կրում են ձեռնոցներ և դեն են նետում դրանք յուրաքանչյուր օգտագործումից հետո: Ձեռնոցները հանելուց հետո անմիջապես լվացեք ձեռքերը: Մի պահեք հավելյալ սպիտակեղեն վարձակալման բաժնում: Այդպիսի պարագաները տրամադրեք միայն ըստ պահանջի:
- ❑ Մի թափահարեք կեղտոտ լվացքը: Դա նվազագույնի կհասցնի օդի մեջ վիրուսի տարածումը: Իրերը լվացեք ըստ արտադրողի ցուցումների: Հնարավորության դեպքում օգտագործեք ջրի թույլատրվող ամենատաք ջերմաստիճանը և ամբողջովին չորացրեք իրերը: Մաքրեք և ախտահանեք լվացքի զամբյուղները՝ ըստ մակերեսների համար նախատեսված վերը նշված ուղեցույցի: Հնարավորության դեպքում զամբյուղներում տեղադրեք տոպրակներ, որոնք նախատեսված են մեկանգամյա օգտագործման և դեն նետելու համար, կամ յուրաքանչյուր օգտագործումից հետո կարող են լվացվել:
- ❑ Խոհանոցային պարագաները, այդ թվում՝ ամանները, թավաներն ու սպասքը, յուրաքանչյուր այցելուից հետո պետք է մանրակրկիտ ձևով մաքրվեն օճառով ու տաք ջրով, և ցանկալի է լվանալ ամաններ լվացող սարքի մեջ: Տրամադրեք ափսեների լվացման համար բավարար օճառ և նոր, չօգտագործված սպունգներ յուրաքանչյուր այցելուի ժամանումից հետո: Հնարավորության դեպքում քննարկեք սպասքը մեկանգամյա օգտագործման պարագաներով փոխարինելու հնարավորությունը:
- ❑ Քննարկեք այցելուի մեկնելուց հետո 24-ժամյա սպասաժամանակի հնարավորությունը, ճամբարային տարածքներին պատկանող կացարանների, այդ թվում՝ վարձակալման միավորների մաքրումից առաջ:
- ❑ Մեծ հավաքույթների, ներառյալ՝ գիտաժողովների կամ ժողովների համար նախատեսված վարձակալման ցանկացած միավոր չպետք է բացվի մինչև այս գործողությունների սկսվելը:

ՍՆՈՒՆԴ ԵՎ ՃԱՇ

- ❑ Հետևեք Հանրային Առողջապահության Վարչության՝ ռեստորաններին վերաբերող Ուղեցույցին՝ սննդի և ճաշի հետ կապված ցուցումների համար:

Սառեցված է՝ այլևս կիրառելի չէ

- ❑ Հանգստի բացօթյա օպերատորները չպետք է կազմակերպեն կոմունալ սննդի փոխանակում (potluck) կամ ուտելու և խմելու նմանատիպ այլ՝ ընտանեկան ոճի միջոցառումներ, որոնք ավելացնում են խաչաձև աղտոտման վտանգը: Եթե անհրաժեշտ է մատուցել կամ համատեղ օգտագործել սնունդ և ըմպելիքներ, հնարավորության դեպքում տրամադրեք մեկանգամյա օգտագործման իրեր: Սնունդ մատուցող անձնակազմը կամ կամավորները պետք է հաճախակի լվանան իրենց ձեռքերն ու կրեն մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ ու դիմակներ:

ԼՎԱՑՔԻ ՍԵՆՅԱԿՆԵՐ

- ❑ Անհրաժեշտության դեպքում լվացքի սենյակների աշխատանքային ժամերը հարմարեցրեք այնպես, որ անձնակազմը համապատասխան ժամանակ ունենա՝ հաճախակի մաքրելու և ախտահանելու լվացքի մեքենաների կափարիչներն ու դռները, էկրանները, սեղանները, երեսները և վաճառասեղանները, աթոռները կամ նստարանները, օճառի սարքերը, պատուհանները և այլ տարածքները:
- ❑ Քննարկեք լվացքի սենյակում ձեռքերի ախտահանիչ միջոցի և ախտահանիչ անձեռոցիկների տեղադրման հնարավորությունը, որպեսզի այցելուները կարողանան մաքրել տարածքը՝ մեքենան օգտագործելուց առաջ և հետո:
- ❑ Լվացքի սենյակներից հեռացրեք բոլոր խաղերը, գրքերը, թերթիկները և այլ առարկաները: Հեռացրեք լվացքի զամբյուղներն ու աղբարկղերը, եթե այդպիսիք տրամադրվում են:
- ❑ Քննարկեք լվացքի սենյակների համար պայմանավորվածությունների համակարգի մշակման հնարավորությունը, որպեսզի անձնակազմը իմանա, թե երբ են օգտագործվում սենյակները, և այցելուները կարողանան խուսափել ոչ անհրաժեշտ շփումներից: Լվացքի սենյակները պլանավորված պայմանավորվածությունների միջև արգելափակված պահեք, որպեսզի բավարար ժամանակ ապահովեք մաքրման աշխատանքների համար:
- ❑ Եթե պայմանավորվածությունների համակարգի մշակումը հնարավոր չէ, ապա պահպանեք ֆիզիկական հեռավորություն՝ փակելով յուրաքանչյուր հաջորդ մեքենան, որպեսզի այցելուները կարողանան միմյանցից վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել:
- ❑ Խրախուսեք այցելուներին սպասել դրսում, մինչև իրենց լվացքը լվացվում/չորացվում է: Հակառակ դեպքում օգտագործեք տեսողական նշաններ, որոնք կուղղորդեն այցելուներին, թե որտեղ կանգնել, և սահմանափակեք մուտքը, որպեսզի անհատ այցելուները կարողանան օգտագործել բազմաթիվ մեքենաներ, եթե միասին են:
- ❑ Որոշեք, թե որն է լինելու այցելուների առավելագույն թիվը՝ ըստ սենյակի չափի և դրան վրա մաքրման և ախտահանման ժամանակացույցերի հետ մեկտեղ տեղադրեք ցուցանակ՝ ցույց տալու, թե քանի անհատ կարող է միաժամանակ գտնվել սենյակում:

Գ. ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Կապնվեք նախապես գրանցված այցելուների հետ՝ նախքան ճամբարային տարածքներ և հանգստի ավտոտնակների կայանատեղիներ նրանց այցելությունը՝ վերահաստատելու գրանցումը և տեղեկանալու համար, թե արդյոք ժամանողներից որևէ մեկի մոտ առկա չեն COVID-19-ի ախտանշաններ: Այցելուից դրական պատասխան ստանալու դեպքում հետաձգեք կամ չեղյալ համարեք այցելությունը:
- ❑ Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցվում է, որ հաստատությունում կամ դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում հարկավոր է դեմքի ծածկոցներ կրել (բացառությամբ՝ ուտելիս կամ խմելիս, եթե կիրառելի է): Սա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձիք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դեմքի ծածկոց, ազատվում են այս պահանջից: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դեմքի ծածկոցներ տրամադրել այն այցելուներին, ովքեր գալիս են առանց դրանց:

Կասեցված է՝ այլևս արդիական չէ

- Իրականացվում է ախտանիշների ստուգումներ՝ նախքան այցելուներին կթույլատրվի հաստատություն մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև արդյոք անհատը գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար, անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված նշաններով, որոնք տեղեկացնում են, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է տարածք մտնեն:
- Օրվա ընթացքում իրականացրեք պատշաճ մաքրման աշխատանքներ բոլոր հաճախակի օգտագործման տարածքներում, ինչպես օրինակ գրանցման տարածքում կամ նստարանների վրա, այցելուների սպասարկման կենտրոններում, աշխատակիցների հանգստի վայրերում, սանհանգույցներում և մուտքի ու ելքի տարածքներում՝ ներառյալ աստիճանասանդարակները և բազրիքները:
- Հաճախակի ախտահանեք սովորաբար օգտագործվող մակերեսները և պարագաները՝ ներառյալ տրանսպորտային միջոցների ղեկերը և փոխանցման տուփի բռնակները, բանալիները, ծորակները, աղբամանները, աթոռները, համատեղ օգտագործման պարագաները, դռների բռնակները, սեղանների մակերեսները, զուգարանակոնքերը և ձեռքերի լվացման հարմարանքները:
- Բացօթյա հանգստի տեսուչները պետք է խորհրդակցեն սարքավորումները արտադրողների հետ՝ տեղեկանալու դրանց պատշաճ ախտահանման քայլերի վերաբերյալ, հատկապես՝ փափուկ և ծակոտկեն մակերեսների համար: Խրախուսեք այցելուներին՝ հնարավորության դեպքում բերել և օգտագործել իրենց անձնական պարագաները:
- Ապահովեք համապատասխան սանիտարական նյութերի, ներառյալ՝ ձեռքերի ախտահանիչ լուծույթների և ախտահանիչ անձեռոցիկների առկայությունը ընդունելության և գրանցման տարածքներում և աշխատակիցների աշխատանքի վայրերում:
- Հարմարությունները, ներառյալ ճանապարհային քարտեզները, գրքերը, ամսագրերը, սուրճը, ջուրը, ինքնասպասարկման կայանները (ընդգրկությամբ սենսորային) և այցելուների համար այլ իրերը պետք է հեռացվեն ընդունելության տարածքներից՝ հպման կետերը և այցելուների փոխազդեցությունը նվազեցնելու նպատակով: Ճանապարհային քարտեզները և տպագիր տեղեկատվական այլ նյութեր կարող են բաժանել այցելուների ժամանման պահին իրենց անհատական օգտագործման համար:
- Հնարավորության պայմաններում դժվար մաքրվող և հաճախակի շփվող իրերը, այդ թվում՝ ընդհանուր օգտագործման սեղանի խաղերը, չպետք է փոխառության հիմունքով տրվեն այցելուներին: Եթե նման իրերի փոխառությունը պարտադիր է, աշխատեք վերադարձված իրերի համար նախատեսել ժամկետ՝ այլ այցելուների կողմից նույն իրի օգտագործումը առնվազն երեք օրով հետաձգելու նպատակով:
- Հետևեք Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնների ցուցումներին՝ ապահովելու բոլոր ջրային համակարգերի անվտանգ օգտագործումը՝ երկարատև անգործությունից հետո, Լեգեոներների հիվանդության և ջրի հետ կապված այլ հիվանդությունների վտանգը նվազեցնելու համար:
- Հաճախ առանց հոսող ջրի օգտագործման սանհանգույցները, ինչպիսիք են շարժական և ստացիոնար զուգարանները, ապահովված չեն ձեռքերի հիգիենիայի պարագաներով: Խրախուսեք այցելուներին օգտագործել առնվազն 60% սպիրտային հիմքով անձնական ախտահանիչ միջոցներ, նման հարմարություններից օգտվելիս: Առկայության դեպքում ապահովեք շարժական լվացարանների մատակարարումը օճառի, սրբիչների և ջրի բավարար պաշարով:
- Արագացված գրաֆիկով մաքրեք սանհանգույցները՝ խրախուսելով այցելուներին դրանց պատշաճ օգտագործումը, այլապես այցելուները խուսափելով ոչ մաքուր սանհանգույցներից, փոխարենը կօգտագործեն դրսի միջավայրը: Հնարավորության դեպքում, ապահովեք մեկանգամյա օգտագործման զուգարանակոնքերի նստատեղերի ծածկոցներ:
- Խրախուսեք այցելուներին հնարավորության պայմաններում իրենց հետ տանել իրենց կողմից բերած պարագաները՝ նվազեցնելու աղբի քանակը ճամբարային տարածքում, այգում, կամ այլ

Ստացված է այլ սիրուն է

վայրում:

- ❑ Զրալցման կայանները, հանգստի ավտոտնակների կայանատեղիների աղբանոցները, գազալցակայանները պետք է մաքրվեն և ախտահանվեն ամեն օր, իսկ աշխատակիցները պետք է սրբեն պարագաները յուրաքանչյուր օգտագործումից հետո: Հնարավորության պայմաններում նշված վայրերում տեղադրեք ձեռքերի ախտահանիչ լուծույթներ՝ այցելուների և աշխատակիցների օգտագործման համար:
- ❑ Անձնակազմը պետք է խուսափի գործիքների, հեռախոսների, էլեկտրական սարքավորումների և գրասենյակային պարագաների համատեղ օգտագործումից, և հնարավորության պայմաններում պետք է ապահովի աշխատողներին անձնական կիրառության աշխատանքային պարագաներով: Երբեք համատեղ չօգտագործեք Անձնական Պաշտպանողական Սարքավորումները:
- ❑ Մաքրող քիմիական նյութեր ընտրելիս գործատուները պետք է օգտագործեն Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության (EPA) կողմից հաստատված N ցանկում նշված COVID-19-ի դեմ օգտագործման հաստատված արտադրանքներ և հետևեն այդ արտադրանքի ցուցումներին: Օգտագործեք առաջացող վիրուսային պաթոգենների դեմ որպես արդյունավետ միջոց պիտակավորված ախտահանիչներ, լուծվող կենցաղային քլորային (բլիչ) լուծույթներ (ջրի մեկ գալոնին՝ 5 ճաշի գդալ) կամ առնվազն 70% սպիրտ պարունակող լուծույթներ, որոնք նախատեսված են մակերեսների համար: Աշխատակիցներին տրամադրեք դասընթացներ արտադրողի ցուցումների և Կալիֆորնիայի Զբաղվածության Անվտանգության և Առողջապահության Ակտի անվտանգ օգտագործման պահանջների վերաբերյալ: Մաքրող միջոցներ կամ ախտահանող նյութեր օգտագործող աշխատակիցները պետք է կրեն ձեռնոց և այլ պաշտպանիչ միջոցներ՝ ըստ արտադրանքի պահանջների:
- ❑ Յուրաքանչյուր այցելուի մեկնումից հետո բոլոր տնակների հարմարանքները պետք է պատշաճ կերպով սրբվեն, մաքրվեն և ախտահանվեն: Սա ներառում է խորովածի գրիլը, աթոռները, երկրորդական բոլոր նստատեղերը (օրինակ՝ ճոճանակներ կամ նստարաններ), ջրի ծորակները և հանգստի ավտոտնակների էլեկտրական և ջրի կեռիկները:
- ❑ Համոզվեք, որ անհրաժեշտության դեպքում բոլոր աշխատակիցները վերապատրաստված են մաքրող միջոցների և ախտահանող նյութերի օգտագործման համար և ունեն դրանց բավարար մատակարարում:
- ❑ Մաքրության ապահովման կամ պահակախմբի աշխատակիցները պետք է տեղեկացված լինեն այն մասին, որ այն վայրում, որտեղ նրանք պատրաստվում են աշխատել, վարակակիր անձ է եղել: Ախտահարված տարածքների վարակազերծման համար առաջարկվում են երրորդ կողմի որակավորված մաքրման ծառայություններ:
- ❑ Եթե մաքրության ապահովման կամ պահակախմբի աշխատակիցներին խնդրում են ախտահանել COVID-19 վիրուսով ախտահարված տարածքը, ապա նրանք չպետք է սկսեն, քանի դեռ ճամբարային կամ հանգստի ավտոտնակների կայանատեղի օպերատորը չի տրամադրել պատշաճ պաշտպանիչ միջոցներ և դրանց օգտագործման վերաբերյալ վերապատրաստում: Մաքրման գործընթացում բոլոր գործողությունների, ներառյալ՝ աղբահանման համար պահակախմբի կամ պահառության աշխատողները պետք է կրեն մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ: Աշխատակիցներին պետք է հիշեցնել ձեռնոցները հանելուց անմիջապես հետո ձեռքերը լվանալ օճառով և ջրով կամ օգտագործել ձեռքերի ախտահանիչ միջոց: Կարող է պահանջվել հավելյալ անհատական պաշտպանության միջոցների անհրաժեշտություն, ներառյալ ակնոցներ՝ պայմանավորված օգտագործվող տվյալ մաքրող / ախտահանող միջոցների ցայտման հավանականության վտանգով:
- ❑ Մաքրության ապահովման աշխատակազմին պետք է տրամադրվի վերապատրաստում և տեղեկատվություն `օգտագործվող մաքրող և ախտահանող միջոցների վտանգների, ինչպես նաև անվտանգության տվյալների թերթիկների առկայության, պահանջվող անհատական պաշտպանության միջոցների և անհրաժեշտ օդափոխության վերաբերյալ:

- ❑ Աշխատակիցները պետք է ունենան բավարար օդափոխություն (օդի հոսք) այն տարածքներում, որտեղ նրանք մաքրում են: Լոգարանի կամ այլ փոքր տարածքի մաքրման դեպքում համոզվեք, որ դուռը և պատուհանները լայն բացված են:
- ❑ Ախտահանման հետ կապված ասթմայի վտանգը նվազեցնելու նպատակով պետք է ընտրվեն N ցուցակում առկա ասթմայի համար ավելի անվտանգ բաղադրիչներով (ջրածնի պերօքսիդ, կիտրոնաթթու կամ կաթնաթթու) ախտահանող նյութեր: Խուսափեք արտադրանքներից, որոնք այս բաղադրիչները խառնում են պերօքսիդային թթվով, նատրիումի հիպոքլորիդով (բլիչ) կամ ամոնիումի միացություններով, ինչը կարող է առաջացնել ասթմա:
- ❑ Ճամբարային և հանգստի ավտոտնակների զբոսայգիների այցելուներին պետք է հիշեցնել, որ պահպանեն վեց ոտնաչափ հեռավորություն մաքրություն ապահովող կամ պահակախմբի աշխատակազմից: Աշխատակիցների հետ պարբերաբար իրականացրեք ստուգման գործընթաց՝ համոզվելու, որ այցելուները հետևում են այս արձանագրությանը: Ապահովեք աշխատակիցների՝ նման տեղեկություններով փոխանակումը՝ առանց ճնշման կամ վրեժխնդրության ենթարկվելու վախի :
- ❑ Ճամբարային և հանգստի ավտոտնակների զբոսայգիների օպերատորները պետք է գնահատեն, թե արդյոք կայանատեղիում գտնվող շների համար նախատեսված տարածքը բավականաչափ ընդարձակ է, որպեսզի տեղավորեն այցելուներին և նրանց կենդանիներին՝ պահպանելով համապատասխան ֆիզիկական հեռավորություն: Եթե տարածքը բավարար չէ, շների համար նախատեսված տարածքները պետք է ընդարձակվեն, զբաղվածությունը սահմանափակվի կամ փակվի:

Դ. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

- ❑ Ճամբարային և հանգստի ավտոտնակների զբոսայգիների օպերատորները պետք է քայլեր ձեռնարկեն, որպեսզի այցելուները նախքան իրենց ժամանումը լիովին տեղյակ լինեն զբոսայգու նոր քաղաքականության և ընթացակարգերի մասին: Նման քաղաքականությունը պետք է ներառի ճամբարային և հանգստի ավտոտնակների զբոսայգիների օպերատորների կողմից՝ ախտանշաններով այցելուների ամրագրումները չեղյալ հայտարարելու իրավունքը, մուտքի նոր ընթացակարգերը, ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջները, ինչպես նաև կացության վայրերի, հարմարությունների և ընդհանուր տարածքների, ինչպիսիք են մուտքի/գրանցման տարածքը և այգու ընդհանուր խանութը կամ այցելուների կենտրոնը, մաքրման և ախտահանման ժամանակացույցերը:
- ❑ Այցելուներին տրամադրել տեղեկատվություն հետևյալ թեմաների վերաբերյալ.
  - Մինչ ժամանումը նախօրոք ծրագրավորեք, ամրագրեք և գնեք անցագրեր, վառելափայտ, սառույց և այլ իրեր՝ առցանց կամ հեռախոսով:
  - Ունեցեք այն ամենը, ինչ ձեզ անհրաժեշտ է: Օրինակ՝ ժամանեք ձեր սեփական օճառով, մակերեսների ախտահանող նյութերով, ձեռքերի ախտահանիչ միջոցներով, թղթե սրբիչներով/ձեռքի սրբիչներով և զուգարանի թղթով: Խորհուրդ է տրվում նաև մաքուր ախտահանող անձեռոցիկներ բերել, որպեսզի ընդհանուր տարածքները մաքրվեն օգտագործելուց առաջ և հետո: Հնարավորության դեպքում՝ բերեք ձեր սեփական մարզական սարքավորումները, սրբիչները, առաջին օգնության պարագաները և բացօթյա հանգստի համար անհրաժեշտ այլ իրեր: Այցելուները զբոսախնջույքի սեղանների համար պետք է բերեն պլաստիկ սփռոցներ, որոնք կարող են այնուհետև դեն նետել կամ տնային պայմաններում լվանալ:
  - Ֆիզիկական հեռավորության պահպանումն ապահովելու համար, այցելուները պետք է կարգավորեն իրենց ճամբարային հանգստավայրերը կամ զբոսախնջույքի վայրերը՝ առավելագույնի հասցնելու համար հեռավորությունը հարևան ճամբարներից և զբոսախնջույքի վայրերից, որտեղ հյուրընկալվել են այլ կենցաղային վայրերում բնակվող անձինք:
  - Որոշ ծրագրեր և հաստատություններ կարող են չեղարկվել կամ փակվել, ուստի այցելուները պետք է ստուգեն առցանց ռեսուրսները՝ կանոնների փոփոխությունների և չեղարկումների

Կասեցված է՝ այլևս ուժի մեջ չէ

Կասեցված է այլևս ուժի մեջ չէ

վերաբերյալ նորացված տեղեկություններ ստանալու համար, որպեսզի իմանան, թե ինչ ակնկալեն ժամանելուն պես:
  - Մինչև օգտագործելը ուսումնասիրեք ինքնասպասարկման հաստատությունների և հարմարությունների վերաբերյալ մաքրման բոլոր արձանագրությունները:
  - Թողեք կահույքը, ինչպիսիք են զբոսախնջույքների սեղանները և աթոռները, այնպիսի վիճակում, ինչպիսին որ մինչ ձեր ժամանելն էր, քանի որ հնարավոր է, որ զբոսայգու աշխատակիցները համապատասխան կերպով տեղավորել են այդ իրերը ֆիզիկական հեռավորության խրախուսման նպատակով:
  - Հետևեք ուղղորդող նշաններին, օրինակ՝ սպասեք ձեր հերթին և ենթարկվեք այն սահմաններին, որոնք կնպաստեն շինությունների ներսում և այլ փակ տարածքներում ֆիզիկական հեռավորության պահպանմանը:
  - Պլանավորեք ձեր ճանապարհորդությունը անվտանգ և պատասխանատու կերպով: Աչալուրջ եղեք, որ որոնման և փրկարարական աշխատանքները պահանջում են բազմաթիվ արձագանքողներ արտակարգ իրավիճակների համար, և այդ առողջապահական ռեսուրսների հավելյալ օգտագործման պահանջները վտանգի են ենթարկում բոլորին:

- ❑ Պահպանեք կապի համակարգեր, որոնք անձնակազմին և այցելուներին թույլ են տալիս ինքնուրույն հաղորդել ախտանիշները և ստանալ ազդեցությունների և սահմանափակումների մասին արագ ծանուցումներ ՝ միաժամանակ պահպանելով գաղտնիությունը:
- ❑ Այս արձանագրության պատճենը տեղադրվում է ճամբարային հրապարակների բոլոր հանրային մուտքերի մոտ:
- ❑ Տեղադրվում են ցուցանակներ, որոնք հրահանգում են շնչառական ախտանիշներով հիվանդ այցելուներին մնալ տանը:
- ❑ Կառույցի առցանց հարթակները (կայք, սոցիալական ցանցեր և այլն) տալիս են հստակ տեղեկություններ ընթացիկ արձանագրությունների, դեմքի ծածկոցների պատշաճ օգտագործման անհրաժեշտության, վարակի կանխարգելման միջոցառումների կիրառման և ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջների վերաբերյալ:

Ե. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Այցելուների համար կարևորագույն նշանակություն ունեցող ծառայություններն առաջնահերթություն են ստացել:
- ❑ Միջոցառումներ են ձեռնարկվում ծառայություններ մատուցելու այն այցելուների համար, ովքեր ունեն շարժունակության սահմանափակումներ և (կամ) հանրային տարածքներում գտնվում են բարձր վտանգի տակ:

Վերևում չնշված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերում, որը բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցի կամ մեկնաբանության դեպքում կարող եք կապ հաստատել ստորև ներկայացված կոնտակտային անձի հետ.

Կոնտակտային անձի անուն՝ ______________________________

Հեռախոսահամար՝ ______________________________

Վերանայման վերջին ամսաթիվ՝ ______________________________